

**ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**ՈՐՈՇՈՒՄ N 22/3**

ք. Երևան

20 ապրիլի 2018թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ «ԴԱՄԱՍԿՈՒՍ» ՍՊԸ դիմում-բողոքը՝

**ՊԱՐԶԵՑ**

**1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները**

«ԴԱՄԱՍԿՈՒՍ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ ընկերություն) ընդունում է, որ սահմանված ժամկետում շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը չներկայացնելու պատճառով ընկերությունը հայտնվել է ավելացված արժեքի հարկման դաշտում:

Ընկերությունը խնդրում է տնտեսական ծանր կացությունը հաշվի առնելով՝ ներողամիտ լինել նշված բացթողման համար և թույլ տալ շարունակել գործունեությունը ծավալել շրջանառության հարկի դաշտում:

**2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

«ԴԱՄԱՍԿՈՒՍ» ՍՊԸ-ն ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է 20.10.2011թ.:

Հարկային մարմնի կողմից 2016թ. ընթացքում «ԴԱՄԱՍԿՈՒՍ» ՍՊԸ-ն սահմանված կարգով ծանուցվել է շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացվելու մասին: Մասնավորապես, 24.02.2016թ. ստորագրությամբ ստացել է շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ ծանուցագիրը և 2016թ. և 2017թ. ընթացքում ընկերությունը համարվել է շրջանառության հարկ վճարող:

«ԴԱՄԱՍԿՈՒՍ» ՍՊԸ-ի իրացման շրջանառությունը 2017թ. ընթացքում կազմել է 9.066.590 դրամ:

**3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ**

ՀՀ հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով հստակ սահմանված է, որ շրջանառության հարկ վճարողներ են համարվում (անկախ բացառապես արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակներ իրականացնելու հանգամանքից) նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանը բավարարող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նույնպես (բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով

սահմանված դեպքերի) տվյալ հարկային տարվա հունվարի 1-ից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքի), եթե հարկ վճարողը մինչև տվյալ հարկային տարվա փետրվարի 20-ը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատված ձևով՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն:

Քննարկվող դեպքում «ԴԱՄԱՍԿՈՒՍ» ՍՊԸ-ի կողմից մինչև տվյալ հարկային տարվա փետրվարի 20-ը ներառյալ հարկային մարմին չի ներկայացվել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն, հետևապես ընկերությունը 2018թ. ընթացքում շրջանառության հարկ վճարող չի կարող համարվել:

Թե ներկայացված դիմում-բողոքում, թե նիստի ընթացքում չի ներկայացվել հիմնավոր ապացույց՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը սահմանված ժամկետում չներկայացնելու պատճառների վերաբերյալ:

#### **4. Եզրափակիչ մաս**

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

### **ՈՐՈՇՈՒՄ Է՝**

«ԴԱՄԱՍԿՈՒՍ» ՍՊԸ-ի դիմում-բողոքը մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

**Հանձնաժողովի նախագահ՝**



**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**